Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-945[6]-23.04.2021,24.05.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 169.29-րդ հոդվածով.

«**Հոդված 169.29. Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման կանոնները խախտելը**

1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի կողմից իրական շահառուների բացահայտման նպատակով պատշաճ ուսումնասիրություն չիրականացնելը կամ իրականացված պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները և փաստաթղթերն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

5. Սույն հոդվածով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե մինչև վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը նա վերացրել է իր թույլ տված խախտումը և իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին է ներկայացրել ապացույցներ այդ մասին:»:

Հոդված 2. Օրենսգրքի 223[1]-ին հոդվածի 1-ին մասում «սույն օրենսգրքի» բառերից հետո լրացնել «169.29-րդ,» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-945[6]-23.04.2021,24.05.2021-ՊԻ-011/1

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 4. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 169.29-րդ հոդվածով.

«Հոդված 169.29. Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման կանոնները խախտելը

6. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

7. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

8. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

9. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի կողմից իրական շահառուների բացահայտման նպատակով պատշաճ ուսումնասիրություն չիրականացնելը կամ իրականացված պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները և փաստաթղթերն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հարյուրապատիկի չափով:

10. Սույն հոդվածով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, եթե մինչև վարչական պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ որոշում կայացնելը նա վերացրել է իր թույլ տված խախտումը և իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին է ներկայացրել ապացույցներ այդ մասին:»:

Հոդված 5. Օրենսգրքի 223[1]-ին հոդվածի 1-ին մասում «սույն օրենսգրքի» բառերից հետո լրացնել «169.29-րդ,» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-945-23.04.2021,24.05.2021-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխությունը, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ**	Փոփոխվող կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «28) միջանկյալ իրավաբանական անձ՝ իրավաբանական անձ և իրական շահառու շղթայում գործող ցանկացած այլ իրավաբանական անձ. »:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ**	Կետում «լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ մասով» բառերը փոխարինել «լրացնել . 29-րդ մասով հետևյալ բովանդակությամբ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի 5-րդ հոդված**	Հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «ներառյալ՝ գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը» բառերը փոխարինել «իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի 5-րդ հոդված**	Հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «7) միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ (իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը).»:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի 5-րդ հոդված**	Հոդվածով լրացվող 60.3-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «6. Իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների վերաբերյալ գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը սահմանում է	Ընդունվել է	Ընդունվել է

			արդարադատության նախարարը: Սույն մասով նախատեսված լրացման կարգում արդարադատության նախարարի կողմից կարող են նաև սահմանվել «Գնումների մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման պարտականություն ունեցող ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից հայտարարագրի լրացման առանձնահատկությունները:»		
6.	*<< կառավարություն*	**Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մաս**	6. Մասում «հաստատման կարգը» բառերից հետո լրացնել «, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	*<< կառավարություն*	**Նախագծի 9-րդ հոդվածի 8-րդ մաս**	Մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր ներկայացված անձանց վրա սույն օրենքով նախատեսված կարգավորումները տարածվում են 2021 թվականի սեպտեմբերի 1-ից: Սույն մասով նախատեսված իրավաբանական անձինք պարտավոր են իրական շահառուների վերաբերյալ սույն օրենքով նախատեսված հայտարարագիրը ներկայացնել մինչև 2022 թվականի	Ընդունվել է	Ընդունվել է

			փետրվարի 20-ը:»:		
8.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի 9-րդ հոդվածի 9-րդ մաս**	Նշված մասում «փետրվարի 20-ը» բառերը փոխարինել «հունիսի 1-ը» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի 9-րդ հոդված**	Հոդվածը լրացնել 10-րդ մասով հետևյալ խմբագրությամբ. «10. Մինչև սույն հոդվածի համապատասխանաբար 2-4-րդ մասով նախատեսված ժամկետների վրա հասնելը իրավաբանական անձը պարտավոր է պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված կարգով գործակալություն ներկայացնել իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն: Հայտարարության մեկ օրինակը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ վերջինիս պահանջով:»	Ընդունվել է	Ընդունվել է
10.	*ՀՀ կառավարություն*	**«Ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 4-րդ հոդված**	Հոդվածով փոփոխվող 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «5) օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ կամ ներկայացրել է իրական	Ընդունվել է	Ընդունվել է

			շահառուի վերաբերյալ կեղծ տվյալ կամ թաքցրել է ներկայացման ենթակա տվյալը և չի վերացրել թույլ տված խախտումը դրա վերաբերյալ կայացված դատական ակտի ուժի մեջ մտնելուց կամ վարչական ակտի անբողոքարկելի դառնալուց հետո 30 օրյա ժամկետում կամ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում լիազոր մարմնին չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:»:		
11.	*ՀՀ կառավարություն*	**«Ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս**	Մասում «2022 թվականի հունվարի» բառերը փոխարինել «2021 թվականի սեպտեմբերի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
12.	*ՀՀ կառավարություն*	**«Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս**	Մասում «2022 թվականի հունվարի» բառերը փոխարինել «2021 թվականի սեպտեմբերի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
13.	*ՀՀ կառավարություն*	**«Գնումների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 1-ին հոդված**	Մասում «հետևյալ խմբագրությամբ» բառերը փոխարինել «հետևյալ բովանդակությամբ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
14.	*ՀՀ կառավարություն*	**«Հայաստանի Հանրապետության քրեական**	Հոդվածով լրացվող 216.1-ին հոդվածը շարադրել հետևյալ	Ընդունվել է	Ընդունվել է

		օրենսգրքում» լրացում կատարելու մասին օրենքի 1-ին հոդված	խմբագրությամբ. «***Հոդված 216.1. Իրական շահառուների վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելը*** *1. Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը՝* *պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:* *2. Իրավաբանական անձի մասնակցի կամ իրական շահառուի կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված անձին իրական շահառուի վերաբերյալ կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը կամ նրա կողմից սույն հոդվածի 1-ին մասում*		

			նշված անձի ներկայացրած հարցմանն օրենքով նախատեսված ժամկետում չպատասխանելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:		
15.	*ՀՀ կառավարություն*	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին օրենքի 1-ին հոդված**	Հոդվածով լրացվող 169.29-րդ հոդվածի 1-ին մասում «առաջացնում է» բառերից հետո լրացնել «նախազգուշացում կամ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
16.	*ՀՀ կառավարություն*	**«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի 1-ին հոդված**	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. *«Հոդված 1. ««Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-80-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածում՝* *1) վերնագիրը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝* *«Հոդված 9. Ֆինանսական հաստատության լիցենզավորման ժամանակ իրականացվող*	Ընդունվել է	Ընդունվել է

			ընթացակարգերը և հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման պարտականությունը». *2) 1-ին և 2-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել։»*		
17.	*<< կառավարություն*	**«Վարկային կազմակերպություններ ի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետ**	Կետով լրացվող 3-րդ մասում «4» համարակալումը փոխարինել «3» համարակալմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	*<< կառավարություն*	**«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի 1-ին հոդված**	Հոդվածում «61. 1-րդ» բառերը փոխարինել «61. 1-ին» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
19.	*<< կառավարություն*	**«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդված**	Հոդվածում «62. 1-րդ» բառերը փոխարինել «62. 1-ին» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
20.	*<< կառավարություն*	**«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդված**	Հոդվածով լրացվող 62.1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող» բառերից լրացնել «իրավաբանական անձ հանդիսացող ներդրումային ֆոնդերի,» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
21.	*<< կառավարություն*		Նախագծերի փաթեթը լրացնել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է	Ընդունվել է

			*«**Հոդված 1.** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 294-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝* ***«Հոդված 294. Իրական շահառուների վերաբերյալ կեղծ տվյալներ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալները թաքցնելը*** *1. Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը՝* *պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս*		

			ժամկետով: *2. Իրավաբանական անձի մասնակցի կամ իրական շահառուի կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված անձին իրական շահառուի վերաբերյալ կեղծ տվյալ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելը կամ նրա կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի ներկայացրած հարցմանն օրենքով նախատեսված ժամկետում չպատասխանելը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:* ***Հոդված 2..*** *Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:»:*		